

ՀՀ Վայոց ձորի մարզպետը մասնակցել է <Հանրային քաղաքականության ձևավորման և համայնքային զարգացման> երկրորդ համաժողովին

05.11.2012



2012 թվականի նոյեմբերի 2-ին Հայաստանի Ամերիկյան համալսարանում Քաունթերփարթ ինթերնեթնլ Հայաստանի կազմակերպության նախաձեռնությամբ կայացավ <Հանրային քաղաքականության ձևավորման և համայնքային զարգացման> երկրորդ համաժողովը, որի աշխատանքներին մասնակցել է ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը:

Համաժողովի մասնակիցներին ողջունել են ՀՀ փոխվարչապետ, ՀՀ ՏԿ նախարար Արմեն Գևորգյանը, ԱՄՆ ՄԶԳ առաքելության տնօրեն Քարեն Հիլիարդը, Քաունթերփարթ ինթերնեթնլ Հայաստանի տնօրեն Ալեքս Սարդարը: Համաժողովի ընթացքում ներկայացվել է ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ Քաունթերփարթ ինթերնեթնլի կողմից իրականացված Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի երկու տարվա արդյունքները: Կազմակերպվել է քննարկումներ: Ներկայացվել է կատարվելիք ծրագրեր:

Նույն համաժողովի շրջանակում նոյեմբերի 2-ին Քաունթերփարթ ինթերնեթնլ Հայաստանի կազմակերպության նախաձեռնությամբ Երևանի Միրահարների այգում կազմակերպվել է համայնքային բարիքների համտես, որին մասնակցել են նաև Վայոց ձորի Վայք, Գետափ, Բարձրունի և Գոմք համայնքները, որոնք բացի ուտեստեղենի, տաղավարները, ներկայացրել էին նաև ձեռքի աշխատանքների ցուցահանդես: Իսկ համայնքների ինքնագործ խմբերի սաները հանդես են եկել գեղարվեստական կատարումներով: